

ԱՐԵՎՅԱՆԻ ՁԵՍՂԱՅԱԾ ՀԱՄԼԵՏԸ

Եթե շեքսպիրյան ավանդները հայ թատրոնում հարյուր տարվա պատմութուն ունեն, ապա դրա կեսը կապված է Հովհաննես Արելյանի անվան հետ: Հիսուն տարի նա մարմնավորել, շունչ ու կենդանություն է տվել շեքսպիրյան կերպարներին: Եվ նորություն ասած չենք լինի, որ Արելյանը հայ ազգային մեծ դերասան լինելուց, «Շիրվանղաղբի թատրոնի» հիմնադիրը լինելուց բացի, Շեքսպիրի թատրոնի դերասան է եղել: Հայ թատրոնի սահմաններից հեռու, միջազգային թատերական կյանքում նա ճանաչման է արժանացել հենց շեքսպիրյան դերերի՝ Օթելլոյի և արքա Լիրի կատարմամբ: Իր այդ դերերով նա հանդես է եկել ոչ միայն Ասիայի ու Աֆրիկայի, Եվրոպայի ու Ամերիկայի թատերաբեմերում, այլև Շեքսպիրի հայրենիքում, ուր նա, որպես շեքսպիրյան թատրոնի դերասան, 1899 թվականի ամառը ուխտի է գնացել հանձարեղ թատերագրի դերեզմանը:

Հովհաննես Արելյանի բեմական հիսնամյա գործունեությունը կապված է շեքսպիրյան դրամատուրգիայի հետ: Ի դեպ, նրա գրչին են պատկանում «Օթելլոյի» թարգմանությունը (1896), ինչպես նաև «Կամակոր կնոջ սանձահարումը» պիեսի թարգմանության փորձը, որ նա կատարել է 1925 թվականին Նյու-Յորքում, բեմադրության նպատակով:

1886 թվականին Արելյանն ընդունվել է Թիֆլիսի հայ դերասանական մշտական խումբը: Առաջին դերը, որ նա խաղացել է այդ թատրոնում շեքսպիրյան դրամատուրգիայից, նույնբերի 6-ին, եղել է էդգարը «Լիր արքայում»: Առաջին դերը և առաջին ծանոթությունը շեքսպիրյան դրամատուրգիայի հետ: Այնուհետև, այդ նույն թվականին նա կատարել է նույնբերի 17-ին՝ Կասիո «Օթելլոյում», դեկտեմբերի 1-ին՝ Առաջին դերասան «Համլետում» և 1887 թվականի փետրվարի 5-ին՝ Հորացիո «Համլետում»: Մեկ թատերաշրջանում շեքսպիրյան շորս դեր:

Սա աննախադեպ երևույթ է սկսնակ դերասանի կյանքում: Բոլոր այս դերերը նա խաղացել է Պետրոս Ադամյանի հետ: Մանավանդ էզդարի դերում, քսանմեկամյա դերասանն այնպիսի ասաշաղիմություն է ցույց տվել, որ ժամանակակիցների՝ Շիրվանզադեի, Հակոբ Հակոբյանի և ուրիշների վիայությունը, հանդիսատեսները շերտ ընդունելությունն է գտել Ադամյանի Արքա կրի կողքին, արժանացել Ադամյանի խրախուսանքին:

Շեքսպիրյան սեպերտուարից Արևլյանն այնուհետև խաղացել է. 1891-ի հոկտեմբերի 24-ին՝ Տրանիո «Անսանձի սանձահարման» մեջ, 1892-ի նոյեմբերի 23-ին՝ Բասանիո «Շալոկոյում»: Մեզ թվում է, սակայն, որ այս դերում (եթև ոչ դերում, դոնե պիեսում) առաջին անգամ նա պետք է հանդես եկած լինի 1889-ի դեկտեմբերի 2-ին Բարվում, որտեղ ինքը խումբ է սյահել: Այդ շրջանում նա հրավիրել էր Չմշկյան ամուսիններին, որոնք Գ. Տեր-Գալթյանի, Գ. Պարոն-Սարգսյանի, Վարդուհու, Փառանձեմի, Զարեկի, Վարդիթերի և ուրիշների հետ ներկայացրել են «Պեսո», «էլի մեկ դոճ», «Շալոկո»: Չմշկյան-Պեսոյի հետ նա կատարել է Զիմդիմովի դերը: «էլի մեկ դոճում», մինչ այդ՝ 1886 թվականին, խաղացել էր Միքսյակը: Միանգամայն բնական է, որ նա պետք է մասնակցած լինի և «Շալոկոյի» ներկայացմանը:

1896 թվականի հունվարի 25-ին Արևլյանն առաջին անգամ հանդես է եկել Օթելլոյի դերում: Նրա նոր դերակատարումներից են եղել՝ 1897-ի պեկտեմբերի 5-ին՝ Պետրուշին «Անսանձի սանձահարման» մեջ, 1905-ի մարտի 31-ին՝ Մարտի իշխանը «Շալոկոյում» և վերջապես 1911-ի հունվարի 28-ին՝ արքա կրը:

Այսպիսով, Արևլյանը մասնակցել է շեքսպիրյան հինգ պիեսի բեմադրություն, կատարելով տասը դեր: Եթե շեքսպիրյան դրամատուրգիայում առաջին անգամ նա հանդես է եկել 1886 թվականի նոյեմբերի 6-ին էզդարի դերով, ապա վերջին ելույթը վերաբերում է 1936 թվականի մարտի 12-ին Բարվում՝ «Արքա կրի» ռեգիոնալ դրամային: Այսպիսով, Արևլյանի ծառայությունը շեքսպիրյան դրամատուրգիային տևել է ուղիղ հիսուն տարի, կես դար, այնքան, ինչքան նա ծառայել է հայ թատրոնին:

Օթելլոն, որը նրա խաղացանկի ամենաներկայապահաց դերն է, խաղացել է բառատուն տարի, Արքա կրը և Առաջին դերասանը՝ քսանհինգական:

1966 թվականին, Շեքսպիրի մահվան 350-ամյակին դուգադիպում են՝ շեքսպիրյան դրամատուրգիայում Արևլյանի առաջին ելույթի 80-ամյակը, Օթելլոյի առաջին դերակատարության 70-ամյակը, Արքա կրի կա-

տարման 55-ամյակը, շեքսպիրյան դրամատուրգիայում նրա վերջին ելույթի 30-ամյակը:

Արեւլանը շեքսպիրյան թատրոնի դերասան է դարձել ղլխավորապես երկու՝ Օթելլոյի և Արքա Լիրի ինքնատիպ դերակատարումներով: Եվ եթե Մակբեթ չի խաղացել, ապա փորձել է Համլետ խաղալ:

Արեւլանը՝ Համլետ: Գուցե տարօրինակ, բայց փաստ է, որ նա ցանկացել է Համլետ խաղալ, և այն էլ ոչ մեկ անգամ: Պարզվում է, որ այս դերը պատրաստելու փորձն էլ իր երկարամյա պատմութլունն ունի նրա արտիստական կենսագրութլյան մեջ:

Ինչպես հայտնի է, «Համլետն» առաջին անգամ հայ թատրոնում բեմադրվել է 1880 թվականի նոյեմբերի 20-ին Քիֆլիսում, Սենեքերիմ Արծրունու թարգմանութլյամբ: Համլետի առաջին դերակատարը եղել է Պետրոս Ադամյանը: Արեւլանը, սակայն, նրա Համլետն առաջին անգամ տեսել է 1885 թվականի վերջերին Բաքվում, Գոնչարովի խմբում ուսուցիչ խաղալիս: Արեւլանը փոքրիկ դերով մասնակցել է Ադամյանի ինչպես այդ, այնպես էլ «Օթելլո» և «Ոճրագործի ընտանիքը» ներկայացումներին: Հաջորդ թատերաշրջանում նա արդեն խաղացել էր Ադամյանի հետ Քիֆլիսի հայ մշտական դերասանական խմբում, կատարելով Հորացիոյի և Առաջին դերասանի դերերը:

Եթե Ադամյանի օրոք, 1886 թվականին, այն էլ գավառական բեմում՝ Արմավիրում, Համլետ խաղալու մի անհաջող փորձ արեց Մաթևոս Ադամյանը միայն, ապա նրա մահից հետո մեկ տասնամյակ ոչ ոք չհամարձակվեց անհանգստացնել Ադամյանի հիշատակը: 1898-ի ամառն էլ Շուշում «Համլետից» հատվածներ խաղալու մի փորձ Գևորգ Պետրոսյանն արեց և դրանով սահմանափակվեց հայ դերասանների՝ Համլետ խաղալու մտադրութլունը, մինչև որ 1901 թվականին հայ թատրոնում գրեթե միանգամից երևացին երեք Համլետ՝ Կարապետ Գալֆայան, Նիկողայոս Հովհաննիսյան և Օֆելիայի քողի փոխարեն Դաննամարբայի իշխանի դաշույնը ձեռքն առած Սիրանուշը:

Ահա այս էր հայկական Համլետի վիճակը Ադամյանից հետո ընկած տասնամյակում, երբ Արեւլանը ևս մտադրվեց մոտենալու այդ դերին:

Համլետ խաղալու Արեւլանի միտքը միանգամից չի ծագել: Նա նախապատրաստվել է դրան և այն էլ՝ երկար ժամանակ:

1891 թվականից, Գևորգ Պետրոսյանի եռանդուն ջանքերի շնորհիվ, նորից կանոնավոր հունի մեջ էր մտել հայ թատրոնի առաջընթացը: Արեւլանը խմբի առաջատար ուժերից մեկն է եղել: 1891—1892 թատերաշրջ-

ջանը նա ավարտել էր 90 ուրլի աշխատավարձով և կես բենեֆիտով։ Քատերական կոմիտեի հետ նրա պայմանագրի ժամկետը լրացել էր 1892-ի ամառը։ Հաջորդ Քատերաշրջանում աշխատելու համար նա պահանջել է ավելացնել իր հասույթը։ Ըստ երևույթին, Արելյանի խնդիրքը բավարարելու նպատակով է, որ իշխան Ամատունին խոստացել է նրան լրիվ բենեֆիտ տալ, իսկ բենեֆիտին՝ Համլետ, իր այս գործունեության հետագա ընթացքի մասին Արելյանը տեղեկացրել է մեծ եզրուրդ՝ ներսեսին, որն այդ ժամանակ ապրելիս է եղել Բարվում։ Ներսեսն էլ իր հերթին Հովհաննեսի աշխատանքների մասին գրել է Շվեդիայում բուժվող եզրուրդ, Ալեքսանդրին։ 1892 թվականի օգոստոսի 23/24-ին, Ալեքսանդրին գրած ներսեսի նամակից տեղեկանում ենք, որ «Հովհաննեսը 90 ու 1/2 բենեֆիտով վերջացրել է Կոմիտեի հետ իշխան Ամատունին նրան տակ է, որ յուր բենեֆիտին անպատճառ Համլետ պիտի խաղա։ Իմ կարծիքով քիչ վաղ է նրան Համլետի դժվարագույն դերը խաղալու»<sup>2</sup>։

Քեկ ներսեսը գտել է, որ դեռևս վաղ է Հովհաննեսին Համլետ խաղալը, բայց նա աշխատել է անել ամեն հնարավորը, որպեսզի կարողանա նպաստել եզրուր ցանկություն իրագործմանը։ Դրա համար ն. Կետչերի ուտեսրեն արձակ թարգմանությունից նա սկսել է թարգմանել հատկապես Համլետի դերը, որպեսզի թարգմանածը մաս-մաս ուղարկելով շուտ հասցրնի Հովհաննեսին և գրանով նա հնարավորություն ունենա ուսումնասիրելու դերը։

Սղրայրների միջև այս մանրամասնությունները բացահայտող նամակագրությունը տևել է մինչև 1892-ի օգոստոս ամիսը։ Ինչպես նամակի շարունակությունից է պարզվում, օգոստոսին նա ոչ միայն սկսել է թարգմանության գործը, այլև մինչև 23-ը գրեթե ավարտել է առաջին գործողության թարգմանությունը։ Այդպես էլ նա գրել է Ալեքսանդրին. «Ես նորա համար սկսել եմ թարգմանել հատկապես Համլետի դերը Կետչերից առաջին գործողությունը վաղը գուցե վերջացնեմ և իսկույն պիտի ուղարկեմ Հովհաննեսին, որպեսզի ժամանակ ունենա մաս-մաս գոնե ուսումնասիրելու այս դերը»<sup>3</sup>։

Մեզ հայտնի չէ, վերջացրե՞լ է արդյոք ներսեսն իր այդ թարգմանությունը, թե ոչ։ Թարգմանության բնագավառում դա նրա առաջին փորձը չի եղել և ոչ էլ վերջինը։ Անգլերենից, ֆրանսերենից, ուտեսրենից նա կատարել է մի շարք թարգմանություններ, որոնց մի մասը բեմ է բարձրացել Հովհաննեսի ջանքերով։ Դրանցից 1891-ին բեմադրվել են և է. Հալեի և է. Սկրիբի «Հերուհին», Վ. Դյալենկոյի «Ժամանակակից սե-

րը», ներսես Աբելյանի գրչին է պատկանում և «Մակեթի» թարգմանությունն անգլերենից (մեզ է հասել առաջին գործողությունը):

Հայտնի չեն նաև, թե հետագա ինչ բախտի են արժանացել ներսեսի թարգմանությունը և Աբելյանի դերակատարությունը: Հավաստի է, սակայն, երկու հանգամանք: Առաջինը, որ ներսեսի աշխատանքից պահպանվել և մեզ է հասել Համլետի և մոր տեսարանի՝ այսինքն, երրորդ արարվածի չորրորդ տեսարանի թարգմանությունը: Եվ երկրորդ՝ ներսեսի այդ թարգմանությամբ Հովհաննեսը ցանկացել է Համլետ խաղալ «Քինի» հինգերորդ գործողությունում: «Քինի» վերջին գործողության մեջ Համլետ, Օթելլո, կամ այլ նշանավոր դեր խաղալը տարածված սովորություն է թատերական կյանքում: Մեզանում, օրինակ, «Քինի» մեջ Համլետ խաղացողներից են եղել Պ. Աղամյանը, Ա. Շահխաթունին, Հ. Ոսկանյանը:

Իր Համլետին հասնելու համար Աբելյանը ևս զնացել է այդ ճանապարհով: Նա ծանոթացել է Համլետի դերակատարների կյանքին ու ստեղծագործությանը, «Համլետի» շուրջը եղած գրականությանը:

Աբելյանի արխիվում պահվում է նրա Համլետի դերի շապիկը (կազմը), որի վրա գրված է. «Համլետի դերը, թար. Ն. Աբելյանի»<sup>4</sup>, և ուրիշ ոչինչ: Դժբախտաբար, չի պահպանվել ներսը՝ դերը: Այս դեր չպարունակող դերի կազմը, սակայն, հետաքրքիր փաստաթուղթ է Համլետի նկատմամբ Աբելյանի վերաբերմունքի մասին: Ինչ-որ ռուսական մի հրատարակությունից Աբելյանը հավաքել է Համլետի ճանաչում գտած դերակատարների նկարներ, կտրել և փակցրել է այդ շապիկի ներսից: Եվ քանի որ Աղամյանին նա դասել է այդ մեծությունների շարքը, իսկ նրա նկարն այն ժամանակ դեռ մամուլում տարածում չէր գտել, ապա դրել է իր վարպետի լուսանկարը: Հետագայում, Աղամյանով հետաքրքրված մեկը ցանկացել է պոկել այդտեղից նրա նկարը և պատռել է: Իսկ ովքե՞ր են եղել Համլետի մյուս հռչակավոր դերակատարները, որոնց նկարները հավաքել է նա: Դրանք են՝ XVII—XIX դարերի ականավոր դերասաններ Դավիդ Գարրիկը, Չարլզ Ալբերտ Ֆրգոտերը, Վիլյամ Չարլզ Մեկրեդին, Բիր-Բոմ-Տրին, Մունե Սյուլլին, Չարլզ Քինը, Թոմաս Բեթտերտոնը:

Ինչպես տեսնում ենք, Համլետ խաղալու համար Աբելյանն էլ միանգամից չի դիմել այդ ողբերգությանը: Նա այդ բարձրությունը ցանկացել է հասնել աստիճանաբար՝ ներկայացման մեջ ներկայացում խաղալու ճանապարհով:

Աբելյանը սովորություն է ունեցել (նույնն էլ ուրիշներին է սովորեցրել) իր ձեռքով արտագրելու իր դերը: Արտագրման այդ միջոցը, իր իսկ

լեզվով տասած, աչքի հիշողութիւնը՝ նրան հնարավորութիւն է տվել դշուրացնել տեքստի ընկալումն ու արագ յարացումը: Այդ սկզբունքով էլ նա արտագրել է Քինի գերբը: Հետաքրքրականն այն է, որ նա փոխանակ առաջին գործողութիւնից սկսելու, նախ արտագրել է հինգերորդ գործողութիւնը տեքստը, ապա՝ առաջինից շորրորդ գործողութիւնները: Ինչպես վերն ասվեց, հինգերորդում պետք է խաղաղյվեր Համլետի և մոր տեսարանը: Այդպես էլ գրել է. «Հինգերորդ գործողութիւնի փոխարեն Համլետից «մոր տեսարանը»: Համլետի գերբը ներ. Արեւլյանի թարգմանութիւնն է»<sup>5</sup>:

Այս տողերից պետք է ընդունել, որ դա 1892 թվականին Կետչերից կատարած ներսես Արեւլյանի թարգմանութիւնի շարունակութիւնն է: Եվ եթէ Ալեքսանդրին գրած նամակում ներսեսն ընդգծել է, թէ ինքը թարգմանել է հատկապես Համլետի գերբը, ապա այստեղ թարգմանված է գրեթէ առաջին արարվածը ընդհուպ ուրվականի հետևալը:

Վերահիշյալ այս ծանոթութիւնից հետո Արեւլյանը գրել է. «Համլետ». թարգմ. սենյակը: Գործ. III, տեսարան 4-րդ»: Սրանից հետո նա տվել է բեմական գրվածքի հատակագիծը: Բեմի ձախ առաջամասում նա նկարել է սիւսոցով ծածկած բարակ ստներով քառակուսի սեղան: Նրա մոտ՝ պատի տակ գրված է հաստ, ծանրագիր բազկաթոս, որի վերին թաղանթն մասը սևացրել է. դահաթոսի առջև գրված է կարճ ստներով փոքրիկ, փափուկ աթոռ՝ ոտքերի համար: Գահաթոսի մոտ պատից կախված է թագավորի շրջանակով դիմանկարը, թագը զլխին: Դիմացի պատին՝ երկու կողմից վարագույրներ են կախված: Վարագույրները հետ են բաշված և կապերով ամրացված պատին: Աջակողմյան պատի կենտրոնում ամբողջ երկայնքով, վերից վար գորգ է կախված: Այդ գորգի ետևում պետք է թաքնվեր Պոլոնիոսը: Բեմի ձախ անկյունում, հատակագծից առաջ, նա նկարել է մի քառակուսի և ներսում գրել՝ Մելվիլ: Աջ մասում նկարած համանման քառակուսի մեջ գրել է Կոմս, Կոմսուհի, Սոմեր: Այս անունները «Քինի» գործող անձերից էին: Բեմի առաջին զծում՝ կենտրոնում նա նկարել է մի քառակուսի, շմոռանալով և հուշարարի խցիկը: Բերես մտադիր է եղել սա էլ օգտագործել:

Քինի գերբում նախապես Համլետի տեքստն արտագրելը, բեմադրութիւնի այս հատակագիծը պերճախոս վկայութիւնն են այն բանի, որ Արեւլյանի համար ամենակարևորը այդ տեսարանը ներկայացնելն է եղել: Սակայն, չգիտես ինչու, Համլետի տեքստի վրա նա ոչ մի խնդիր չի նշել: Մինչդեռ Քինի գերբում լուսանցքներում նա բավականին նշումներ է կատարել մատիտով, ինչպես խնդիրների, այնպես էլ բեմական ռեկվիզիտի

մասին: Այսպես, օրինակ, հենց սկզբից Քինն ասում է. «Միլեդի... Միլորդ, կհամարձակիմ հուսալ, որ դուք կներեք նամակիս և վարմունքիս հակասությունը»: Այս նախադասության դիմաց լուսանցքում նա գրել է. «Գլուխ է տալիս ձախ, հետո՝ աջ»: Հաջորդ նախադասության դիմաց, ուր նա պատմում է. «Մի անսպասելի դիպված իսպառ փոխեց իմ դիտավորությունները» և այլն — ավելացրել է. «Չափազանց քաղաքավարի»: Կամ թե՛ երրորդ գործողության մեջ որպես ունեարկ փակագծում նշված է. «Մտնում է»: Արեւլյանն ավելացրել է «Միջի դռնից մտնում է և նստում խորքում»:

Լուսանցքներում կատարած այս և ուրիշ նշումները ցույց են տալիս, թե նա ինչպիսի լրջություն է վերաբերվել ոչ միայն դեպի Համլետի, այլև Քինի դերը, որի միջոցով նա պետք է մարմնավորեր առաջինը: Բայց և այնպես այդքան նախապատրաստական աշխատանքից հետո երբ՝ է նա Բին խաղացել և «Քինի» մեջ էլ՝ Համլետ: Եվ խաղացել է արդյոք: Քինի դերի վրա Արեւլյանը գրել է. «Քին: Կոմեդիա 5 գործ. Ա. Դյումայի, Թարգմանություն Ավալյանի: Քինի դերը իմ նպաստիս: Սկսեցի գրել նոյեմբ. 30-ից»: Քիշ ներքև նա բերել է այս տողերը.

„Кин-пылкий характер“, գրա տակ՝ „Гелзит“<sup>6</sup>.

Թվական և ոչ մի տվյալ, բացի նոյեմբերի 30-ից :

Արեքսանդրին գրած ներսեսի նամակից պարզ էր, որ 1892 թվականի օգոստոսին նա սկսել էր թարգմանել «Համլետի» առաջին գործողությունը: Եթե նա իր խոստման համաձայն դերն արագ թարգմանել և ուղարկել է Հովհաննեսին, հնարավոր է, որ խոսքը նույն թվականի նոյեմբերին է վերաբերում: 1893-ի ամռանը Արեւլյանը շրջագայության է դուրս եկել դեպի Աստրախան, Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի զանազան քաղաքներ: Եթե այդ շրջագայությունների ժամանակ որևէ վայրում Արեւլյանը չի խաղացել Քինի դերը, ապա մնում է ենթադրել, որ նա առհասարակ այդ դերը չի խաղացել: Հայտնի է, որ 1893 թվականին «Քինը» բեմադրվել է Թիֆլիսում: Բայց այդ բեմադրության Քինի դերակատարը եղել է Գևորգ Պետրոսյանը, իսկ Արեւլյանը՝ սոսկ ներկայացման մասնակից: Քինն այնպիսի դեր չէ, որ անուշադրության մատնվեր մամուլի և քննադատության կողմից: Նշանակում է, չնայած իր ջանքերին, Արեւլյանին չի հաջողվել Քին խաղալ: «Քինի» մեջ էլ՝ Համլետ խաղալ: Այսպիսով նրա Համլետ խաղալու առաջին փորձը չի հասել ցանկալի նպատակի: Արեւլյանը Համլետ չի խաղացել:

Համբախտ խաղալու ցանկութունն Արեւլանի մոտ դեռ չէր մարել, երբ 1894 թվականին Քիֆլիսում լույս է տեսել «Համբախտի» մի նոր թարգմանություն (գրաքննության թույլտվությունը հունիսի 22-ին): Դա շեքսպիրյան պիեսների շարքից Հովհաննես Մասեհյանի կատարած թարգմանության անդրանիկ ապագրությունն էր: Մինչ այդ, 1889 թվականին, Քիֆլիսում հրատարակվել էր Սենեքերիմ Արծրունու 1880 թվականին կատարած թարգմանությունը: Այդ թարգմանությունը ծանոթ է եղել Արեւլանին: Դրանով է նա Աղամյան-Համբախտի հետ Հորացիո և Առաջին գերասան խաղացել 1886 թվականին: Սակայն մի քանի թարգմանություններից 23 օրում Արծրունու կատարած թարգմանությունը գոհացում չի տվել նրա պահանջներին: Առաջնությունը նա տվել է Մասեհյանի՝ բնագրից կատարած թարգմանությանը:

Քե ինչքան ժամանակ էր անցել Մասեհյանի թարգմանությունը լույս տեսնելուց հետո, հայանի չէ, բայց Արեւլանի բմբոս ոգին նորից ծառս է եղել Համբախտ խաղալու Քիլի միջոցով Համբախտի հասնելու անհաշու փորձը նրան չի բնկնել և նա որոշել է ինչ էլ լինի խաղալ այդ դերը, իհարկե՝ Մասեհյանի թարգմանությամբ:

Ձեռքի տակ ունենալով «Համբախտի» 1894 թվականի Մասեհյանի թարգմանությունը, Արեւլանը մի անգամ չէ որ անդրադարձել է նրա բեմադրությանը: Նա երկու անգամ դերաբաշխում է կատարել, երկու անգամ կրճատումներ՝ մատիտով և թանաքով: Կերպին հանդամանքը ապացուցում է, որ նա հետևողականորեն զբաղվել է այդ պիեսով:

Պիեսում կրճատումներ կատարելուց բացի Արեւլանը միշամտել է թարգմանությանը և խմբագրական որոշ աշխատանքներ կատարել: Նրա կատարած թարգմանական և խմբագրական հավելումները ցույց են տալիս, որ, ելնելով իր բեմական փորձից ու զգացողությունից, Արեւլանն աշխատել է մատչելի դարձնել տեքստը, երբեմն սեղմել նախադասությունը, երբեմն ընդարձակել:

Նա ձեռքի տակ ունեցել է «Համբախտի» ռուսական հրատարակությունը: Այդ հրատարակությունը, մեր կարծիքով, եղել է Շեքսպիրի երկերի լիակատար ժողովածուի երրորդ հատորը, որը երրորդ հրատարակությամբ լույս է տեսել 1880 թվականին Պետերբուրգում: Հատորի մեջ մտել են «Ռոմեո և Ջուլիետ», «Քիմոն Աթենացի», «Հուլիոս Կեսար», «Մակբեթ», «Համբախտ», «Արքա Լիր», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Օթելլո», «Յիմբելին», «Պերիկլես» պիեսները, ինչպես և սոնետներ ու պոեմներ: Ամենայն հավանականությամբ Արեւլանն այդ գրքով է ծանոթացել շեքս-

պիւրյան գլուխգործոցներին և թարգմանել «Օթելլոն» Պ. Վեյնբերգի  
թարգմանութիւնն ից:

Որ Արեւլանի ձեռքի տակ եղել է Համլետի ուսերն օրինակ, որով  
նա համեմատութիւններ է կատարել և ուղղումներ մտցրել, անկասկած է:  
Համոզվելու համար բերենք մի օրինակ: «Համլետի» 1894 թվականի հրա-  
տարակութեան մեջ առաջին արարվածի առաջին տեսարանում, երբ  
Ֆրանցիսկոն հերթապահութիւնը հանձնելով Բեռնարդոյին, բարի գիշեր  
է մաղթում նրան, միացվել են Ֆրանցիսկոյի և Մարցելլոսի տեքստերը:  
Ստացվել է այսպես.

Ֆրանցիսկո

Գե՛հ, գիշեր բարի:

Օ՛, երթաս բարով, դու պարկեշտ զինվոր:

Քեզ ո՛վ արձակեց:

Այստեղ «Օ՛, երթաս բարով»-ից առաջ լուսանցքում Արեւլանը մա-  
տիտով ավելացրել է. «Մարս.—» որպես Մարցելլոսի տեքստ: Արեւլանը  
թերևս առաջինն է, որ ուշադրութիւն է դարձրել դրա վրա և ուղղում կա-  
տարել:

Արեւլանն առավելապես միջամտել է առաջին և երկրորդ արարված-  
ներին: Առաջինի մեջ՝ հատկապես շորրորդ տեսարանում: Նա ուշադրու-  
թիւն է դարձրել հոր ուրվականի և մոր տեսարաններին: Տեքստի առան-  
ձին տողերից բառեր կրճատելով՝ նա միացումներ է կատարել, բայց այն-  
պես, որ չխաթարվի տեքստի իմաստը: Այդ կարգի օրինակներն ամբող-  
ջութեամբ մեջբերելու անհրաժեշտութիւն չկա: Բավականանա՞նք մի քա-  
նի բնորոշ օրինակներով միայն, ցույց տալու համար նրա մոտեցումը կըր-  
ճատումների, թարգմանութեան և դերասանական խնդիրների պարզաբան-  
ման հանդեպ, որ նա դրել է իր առաջ իբրև Համլետի դերակատար:

Ա) Կրճատումների մասին

«Համլետի» առաջին հրատարակութեան (1894) մեջ գրված է.

Համլետ

Թըվում, տիկին. ահ, ո՛չ. իրո՛ք այդպես է:

Ես «թըվում» չգիտեմ: Ո՛հ, բարի մայր իմ,

Ոչ քե՛ս թանաքի գուլն այս իմ վերարկուս,

Ոչ էլ սովորական սուգի սևերը,

Ոչ հեացող կուրծքի բռնազբոս շունչը,

Ոչ էլ հորդառատ աչքերի գետը

Եվ ոչ հլուծված դեմքի հալումաշ տիպը,  
Յավի բուրբ ձևեր, կերպեր, ցուլցերը,  
Կարող են անխարդախ հայտնել ներքինը... և այլն:

Արելյանն այստեղից կրճատել է կրթորդ տողի «թև»-ն, շորթորդ տողի «էլ»-ը, իսկ վիցերորդ տողի «էլ»-ը կրճատել, հետո վերականգնել է: Որպես խրթին, մանվածապատ տողեր նա ջնջել է յոթերորդ և ութերորդ տողերը: Առաջին հրատարակությունը երկրորդի (1921) հետ համեմատելուց հետո տեսնում ենք Արելյանի միջամտության իրավացիությունը: Հատկապես այն տեղերում, ուր նա կրճատումներ է արել, միանգամայն այլ սրակ են ստացել Մասեհյանի վերջին հրատարակության մեջ: Ահա այդ տողերը.

#### Համվետ

Թրվում, ոչ տիկին, այլ է, չդիտեմ «թրվումն» ինչ բան է:  
Ոչ մեկանագույն վերարկուս միայն, սիրելի մայր իմ,  
Ոչ հանդիսավոր սև հանդերձները,  
Ոչ բուսն շունչի հողմային հերթ  
Եվ ոչ աչքերի հորդաճառ գետը,  
Ոչ էլ երեսի վշտաճար տեսքը,  
Կսկիծի բուրբ ձև ու կերպերի, նշանների հետ  
Կարող են երբևր հարազատորեն ներքինս հայտնել... և այլն:

Ինչպես տեսնում ենք, վերանայելուց և տողերն ավելի շեշտակի դարձնելուց հետո Մասեհյանն էլ հրաժարվել է «թև»-ից ու «էլ»-ից, պահպանելով միայն վերջին «էլ»-ը որի պահել-չպահելու վրա տատանվել է Արելյանը: Հիմնովին վերակառուցվել և հստակություն են մտցվել նաև կրճատված տողերի մեջ: Եթե առաջ ապված էր.

Եվ ոչ հլուծված դեմքի հալումաշ տիպը,  
Յավի բուրբ ձևեր, կերպեր, ցուլցերը...

ապա այս դեպքում դարձել է.

Ոչ էլ երեսի վշտաճար տեսքը,  
Կսկիծի բուրբ ձև ու կերպերի, նշանների հետ:

Ինչպիսի՞ տարբերություն: Եթե Արելյանն այս օրինակով կամենար Համվետ խաղալ, կարծում ենք, որ չէր կրճատի այս տողերը:

Այս և մյուս կրճատումներն առհասարակ զբղի մի հարվածով չի արել

Աբելյանը: Նա մտածել է դրանց մասին, փնտրել, որոնք է առավել իմաստալից հոմանիշը, սահուն արտաբերվողը, բայց այնպես, որ պահպանվի և՛ տեքստի իմաստը, և՛ գործողության օրգանական շարունակությունը: Ահա, օրինակ, նրան մտահոգած մի հատված առաջին գործողության երկրորդ տեսարանից: Այնտեղ, երբ թագավորի և թագուհու դուրս գնալուց հետո Համլետն արտասանում է. «Ախ երանի՛ այս պինդ...» բառերով սկսվող մենախոսությունը, առաջին հրատարակության մեջ տրված է.

Վա՛հ, ինքը՛, նույն ինքը՛. երկի՛նք: Մի գազան,  
Մի անբան գազան իսկ ավելի կողբար:  
Նա՛, կի՛ն իմ հորեղբոր, իմ հորը՛ս եղբոր.  
Բայց հորս շէր նման, որքան որ շեմ ես  
Հերկույեսին նման: Մեկ ամի՛ս միայն:

Այս տողերը նախապես կրճատելով նա թողել է.

Մի գազան,  
Մի անբան գազան իսկ ավելի կողբար:  
Մեկ ամի՛ս միայն:

Սակայն շճամաճայնելով դրան, նա ընտրել է մի նոր տարբերակ.

Վա՛հ, ի՛նքը, նույն ինքը՛. երկի՛նք: Մի գազան,  
Մի անբան գազան իսկ ավելի կողբար:  
Նա՛, կի՛ն իմ հորեղբոր,  
Մեկ ամի՛ս միայն:

Նման խոսքումներ նա կատարել է նաև երրորդ արարվածի երկրորդ տեսարանում, բեմական թագավորի և թագուհու տեքստերում: Ահա այդ օրինակը.

Բեմական թագավորը  
Ես հավատում եմ, թե արդ անկեղծ եմ  
Քո ասածները:  
Բայց ա՛յնքան հաճախ մենք բեկանում ենք  
Մեր նվաճածները (կրճատել է 20 տող):  
Որ մեր բաղդի հետ նույնիսկ մեր սերը  
Իսկույն փոխվում է (կրճատել է 24 տող):  
Դու արդ խորհում ես, որ չես լինելու

Մի երկրորդի կին.  
Մեռնում են մտքերդ, երբ որ մեռած է  
Քո տերը նախկին:

Բեմական քաղցունին

Թող որ երկիրն ինձ սնունդ չտա  
Եվ երկինքը՝ լույս,

Գիշեր ու ցերեկ հաճույք և հանդիսս  
Չբտան խղճավույս (կրճատել է 10 տող):

Թե այրի լինիմ ե կրկին ցանկամ  
Նոր ամուսնության:

Ահա այն բոլոր ապրումների հանրագումարը, ինչ պետք էր պարզել  
Համլետին՝ հոր հարցումը և մոր պատասխանը: Գրա ճշմարտությունն  
ստուգելու նպատակով է, որ նա ստեղծում է «միան թախարդի» տեսա-  
բանը: Այդքանը բավական էր Արելյանի Համլետի համար, որ նա ստա-  
նար իրեն հուզող հարցի պատասխանը:

Ահա կրճատման մի այլ հետաքրքիր օրինակ: Չորրորդ արարվածի  
հինգերորդ տեսարանում, երբ Լահերը խուժելով պալատ է մտնում, բո-  
լորն ահ ու սարսափի մեջ են: Նման պայմաններում ինչպե՞ս կարելի է  
երկար-բարակ դատողություններ անել: Պետք է վտանգի առաջն առնել:  
Ու այստեղ, գործողություններն ընթացքն արագացնելու նպատակով, Արել-  
յանը գրեթե երկու էջը կրճատել դարձրել է մի քանի պարբերություն,  
որով ամեն ինչ պարզվում է: Ահա կրճատումից հետո մնացած տեքստը:

Թաղունի

Վայ, ի՞նչ ձայն է այս: (Կրճատել է թագավորի, պալատականի  
և թագուհու հաջորդ խոսքերը)

Թագավոր

Գոները ջարդվեցան: (Մտնում են Լահերը և ուրիշներ)

Լահեր

Ո՞ր է այդ արբան:

— Ամենքդ, պարոններ, դուրսը սպասեք: (Կրճատել է տեքստը և  
միացրել Լահերի հաջորդ  
պարբերությունը)

— Պահպանեցեք դուռը: Ո՞վ դու ստոր արբա

Տուր ինձ իմ հայրս:

## Թագավոր

Հանդարտ կերպով, Լաերտ:

Լաերտ

Արյանս այն կաթիլը, որ հանդարտ լինի,

Անունս կհնքե պոռնըկի որդի:

Այստեղ հիշատակված և չհիշատակված բազմաթիվ կրճատումների առկայությունը, այնուամենայնիվ, կասկածի տեղ է թողել: Ինչո՞ւ ամբողջ պիեսն այդ վիճակում չէ, ինչո՞ւ այնքան երկար պարբերություններ, մենախոսություններ չեն արժանացել նրա ուշադրությանը, վերաբերմունքին: Եթե կրճատումները վերաբերեին լուկ Համլետի դերին, ապա կարելի էր ենթադրել, որ նա մտադիր է եղել հատվածներ ներկայացնել: Բայց դրանք վերաբերում են գրեթե բոլոր դերերին, կնշանակե և ամբողջ պիեսին: Ինչպես պիեսը, այնպես էլ Համլետի դերը Աբելյանը լիովին չի մշակել: Կրճատման և տեքստի վրա աշխատելու հետքեր չկան շատ տեսարաններում: Զգացվում է, որ նա կրճատել է առաջին արարվածի առաջին և երկրորդ արարվածի առաջին տեսարանները: Շատ աննշան միջամտություններ է արել երկրորդ արարվածի երկրորդ տեսարանում: Երրորդ արարվածի առաջին տեսարանում նշել է մի խնդիր միայն, երկրորդ տեսարանում կրճատել բեմական թագավորի և թագուհու տեքստի մի մասը, իսկ երրորդում ոչ մի միջամտություն չի կատարել: Զորրորդ արարվածից նա կրճատել է առաջին, չորրորդ և վեցերորդ տեսարանները: Հինգերորդ արարվածում բացի ներկայացման վերջը նշելուց, ուրիշ ոչ մի նշում չի արել: Ըստ այդ կրճատման՝ ներկայացումը պետք է վերջանար Համլետի մահից հետո, Հորացիոյի հետևյալ խոսքերով.

Մի աղնի՛վ սիրտ պայթեց:— Մնաս բարև, քաղցր իշխան,  
Եվ հրեշտակաց խմբեր երգեն քեզ ի հանգիստ:

Չնայած պիեսի վրա Աբելյանի թափած այլքան ջանքերին, այնուամենայնիվ, նրա աշխատանքը չի ավարտվել, մնացել է թերի:

Բ) Թարգմանությունների մասին

Տեքստի հարադատության և հնչողության համար Աբելյանը մի շարք ուղղումներ ու լրացումներ է արել թարգմանության մեջ: Բացի առանձին բառերի փոփոխությունից, նա վերակառուցել է նաև տողեր ու արտահայտություններ: Մի կողմ թողնելով մանր շտկումները, նշենք մի երկու միջամտություն:

Առաջին արարվածի երկրորդ տեսարանում Համլետը, մնալով մե-  
նակ, ասում է.

Ախ երանի՜ այս պինդ, խիստ պինդ մարմինը  
Հայվեր, լուծվեր կաղմից, փոխարկվեր ցողի...

Իսկ երկու տող հետո տպված

Ո՛հ, աստված իմ, աստված, ի՜նչպես տաղտկալի,  
Ունայն, անհամ, անշահ են թվում աչքիս...

տողերին միջամտելուց հետո ստացվել է հետևյալը՝

Ախ երանի՜ այս պինդ, շափաղանց պինդ մարմինը,  
որ կաշկանդում է հոգիս  
Հայվեր, լուծվեր կաղմից և ցող դառնար.  
Ո՛հ, աստված իմ, աստված, ի՜նչպես տաղտկալի, դարշելի,  
Ունայն թվում են աչքիս:

Վերջին տողի առաջին ձևը եղել է՝ «Ունայն են թվում աչքիս»: Հետո՝  
առաջ բերած «են»-ը ջնջել, նորից հետ է տարել: Վերջին այս երկու տողը  
արմատական վերակառուցման է ենթարկել և ինքը՝ Մասեհյանը: Ահա  
երկրորդ հրատարակության այդ տեսար.

Աստված իմ, աստված,

Ինչպե՛ս տաղտկալի, անհամ ու տափակ, փուչ են թվում ինձ...

Այդ նույն տեսարանում Համլետն ասում է Հորացիոյին.

Խնայություն, Հորացիո, խնայություն էր այդ:

Արելյանն այն դարձրել է.

Տնտեսություն, Հորացիո, տնտեսություն:

Մասեհյանի երկրորդ բարեփոխությունից հետո ստացվել է՝

Խրնայություն, խրնայողություն, Հորացիո:

Այստեղ ևս Արելյանի նախընտրած ձևը համապատասխանում է Մա-  
սեհյանի վերջին թարգմանությանը:

Գարձյալ նույն տեսարանում, երբ Հորացիոն պատմում է ուրվականի  
մասին, Համլետը բացականչում է. «Հրաշալի՜ բան է»: Արելյանն այն  
փոխել, դարձրել է՝ «Հրաշք է սա»: Երկրորդ հրատարակության մեջ այդ  
խոսքերն ստացել են՝ «Շատ տարօրինակ» ձևը: Արելյանի թարգմանու-  
թյունը մոտ է երկրորդին և ճշմարիտը դա է: Հրաշք է կատարվել, շե-

դած, տարօրինակ բան՝ թագավորի ուրվականն է երևացել: Ի՞նչ հրաշալի բան կա այդտեղ հորը կորցրած Համլետի համար:

«Համլետի» մեջ կատարած ուղղումներն ու լրացումները առավելապես զգալի են երրորդ արարվածի շորորդ տեսարանում: Սա վկայում է այն բացառիկ հետաքրքրությունը, որ նա ցուցաբերել է դեպի Համլետի կերպարը, նրա հոգեբանությունն և բացահայտմանը: Բերենք մի քանի բնորոշ օրինակ:

Պոլոնիոսի մահից հետո տեքստում այսպիսի տող կա. «Քեզ մեկի տեղ առի, որ բարձր է քեզնից»: Արելյանն «առի» ձևը փոխել է՝ «Քեզ մեկի տեղ ընդունեցի»: Այդպես է վարվել և Մասեհյանը երկրորդ հրատարակության ժամանակ, գրելով՝ «Քեզնից մեծի տեղ ենթադրեցի քեզ»: Ընդունել ու ենթադրել տվյալ դեպքում նույն իմաստն են արտահայտում:

Այդ նույն տեքստում Համլետը մորն ասում է. «Սուս, նստիր տեղդ»: Արելյանը «սուս»-ը դարձրել է «հանդարտ»: «Հանդարտ կաց, նստիր» ձևն է ընդունել և Մասեհյանը: Կամ թե Համլետն ասում է.

Եվ եթե անիծված սովորությունը  
Ձէ քարացրած նորան, այնպես պնդացրած,  
Որ ամեն զգացման անթափանց է այլևս:

Բավականին մանվածապատ այս արտահայտությունը մտահոգել է Արելյանին և եթե որոշ բան հաջողվել է պարզեցնել, այնուամենայնիվ, նրա մոտ էլ սահուն չի ստացվել: Բայց նա որոնել է արտահայտիչ ձևը, գտել, ուստի կատարել է հետևյալ փոփոխությունը:

Եվ հրեշային սովորությունը  
Քարացրած չլինի նորան, այնպես  
Որ ամեն զգացման անթափանց մնա:

Վերջին բառի տեղ նախապես նա գրել է «լինի», հետո ջնջել, դարձրել է «մնա»: Այս պարբերությունը բոլորովին նոր որակ է ստացել Մասեհյանի մոտ, դառնալով՝

Եթե անիծյալ սովորությունը  
Պղնձացրած չլինի նրան  
Եվ թումբ ու պատենշ դարձրած ամեն զգացմունքի դեմ:

Համլետի այն տեքստում, երբ նա մորն ասում է «նայիր այս պատկերին, և սորան նայիր» և այլն, մի այսպիսի տող կա. «Քանզի քո հա-

սակում արշան ավլունը»։ Արեւլանը «հաստակում»-ը դարձրել է «տարի-  
քում»։ Այդպէս է վարվել և թարգմանիչը երկրորդ հրատարակութունում՝  
«քո տարիքի մեջ»։

Համլետի մի ալ խոսքում, որ սկսվում է «Օ, ոչ, բայց ապրել դարշ  
քրտինքի մեջ» տողով, «Օ, ոչ, բայց» ժխտական և անորոշ ալզ ձևը նա  
դարձրել է հարցական. «Մի՞թէ կարելի է»։ Հարցական ձևն է պահել և  
Մասեհճյանը, գրելով. «Եվ ի՞նչ»։ Ահա և մի վերջին օրինակ։ Ուրվականի  
հեռանալուց հետո, Համլետը պատվիրում է մորը շմտնել հորեղբոր ան-  
կողինը, սակով,

Օ՛հ, ձգիր քեզանից վարակված մասը  
Եվ ապրիր մյուս կեսով, ավելի մաքուր։  
Բարի գիշեր։  
Բայց ո՛հ, մի՛ մտնիր հորեղբորս մահիւնը։

Արեւլանն այստեղ տերտային այնպիսի փոփոխութուններ է կա-  
տարել, որոնք ասես թե լսել և հաշվի է առել թարգմանիչը։ Ահա Արեւլ-  
յանի ուղղած տեքստը։

Օ՛հ, մի կողմ նետե նորա վատթար մասը  
Եվ ապրիր մյուս կեսով, ավելի մաքուր։  
Բարի գիշեր։  
Բայց ո՛հ, մի՛ մտնիր հորեղբորս անկողինը։

Ահա և Մասեհճյանի վերջնական տեքստը.

Դեն ձգիր քեզնից ներս վատ կեսը,  
Եվ մյուս կիսովը մաքուր կյանք վարիր։  
Բարի գիշեր քեզ։  
Բայց հորեղբորս դարշ անկողինը մի՛ մտիր կրկին։

Ինչպէս նախորդ օրինակներում, այնպէս էլ այստեղ, Արեւլանի կա-  
տարած բազմաթիվ ուղղումներ արդարացրել են իրենց։ Դրանց զգալի  
մասն իրենց արտացոլումն են գտել «Համլետի» երկրորդ հրատարակու-  
թյունում, իսկ առանձին բառեր նույնությամբ տեղ գտել երկուսի մոտ էլ։

Եվ այս բոլորն իրարից անկախ։ Այստեղ զգացվել է ոչ միայն խոսքն  
արժեքավորող արվեստագետի մտքի ճկունութունն ու լեզվի փայլուն  
զգացողութունը, այլև թարգմանչական կարողութունները։

## Գ) ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Որպես ռեժիսոր և դերակատար, «Համլետի» տեքստում և նրան զուգահեռ, գրքի լուսանցքներում Արելյանը բազմաթիվ գրառումներ է կատարել: Դրանց մի մասը վերաբերում է բեմական խնդիրներին, բեմավիճակներին և դադարներին, մի հանգամանք, որը լրացնում է մեր սուպավորությունները Համլետի բեմադրության շուրջը նրա կատարած մանրակրկիտ աշխատանքների մասին:

Բեմավիճակներից երկու հիշատակություն կա միայն, երկուսն էլ առաջին արարվածում: Առաջինը՝ Ֆրանցիսկոյի բարի գիշեր մաղթելու առթիվ, մատիտով, փակագծում գրել է՝ «գնում է», և երկրորդը՝ Լաերտի առթիվ, երբ թագավորն ասում է. «Ժամանակը ձերն է և ձեր իղձերը թույլ ինչպես հաճո է տրամադրեն նորան»: Այս տողերից հետո թագավորի խոսքերն ուղղված են Համլետին: Ուստի, նախքան թագավորը կդիմեր Համլետին, Արելյանը փակագծում նշել է. «Լ. գ.», որը կնշանակի՝ Լաերտը գնում է:

Դադարների նշումներ կան առաջին արարվածի երկրորդ և չորրորդ տեսարաններում:

Գերի ուսումնասիրության համար առավել հետաքրքիր են այն խնդիրները, որ նա գրել է իր առաջ իբրև Համլետի դերակատար: Դրանք մեծ մասամբ նկատելի են այն տեսարաններում, որոնց վրա նա լրջորեն աշխատել է, ինչպես տեքստի կրճատման, այնպես էլ թարգմանությունների վերաբերյալ իր միջամտություններով: Այսպես՝ առաջին արարվածի երկրորդ տեսարանում, Լաերտի գնալուց հետո, երբ թագավորը դիմում է Համլետին՝ անվանելով նրան «Համլետ, ի՛մ որդիս», իսկ Համլետը պատասխանում է. «Բո՛ղբ ինչ ավելի, քան մի ազգական»: Այս խոսքերի դիմաց Արելյանը փակագծում նշել է, «կիսակողմ»: Խոսքն ուղղակի թագավորի երեսին ասելու փոխարեն, նրանից թեքված մի կողմ է ասել իր ասելիքը, կամ ինչպես ընդունված է ասել՝ «մի կողմ», «մեկուսի»:

Նույն տեսարանում, երբ Հորացիոն պատմում է Համլետին, թե Բեռնարդոն և Մարցելլոսը պահակության ժամին տեսել են նրա հոր ուրվականը և այն էլ զինված, Համլետը հարցնում է. «ոտից մինչև գլո՞ւխ»: Հորացիոն պատասխանում է՝ «ոտից մինչև գլուխ»: Այստեղ նրա խնդիրը եղել է այդ բոլորն ընկալել «անգիտակցաբար, մտածելով»: Չէ որ դա հրաշք էր, ինչպե՞ս կարող էր երևալ հոր ուրվականը: Եվ նա, կարծես այդ բոլորն ստուգելու, համոզվելու համար հարցեր է, որ տալիս է նրան. «գեմբը շտեսա՞ք», «արդյոք բարկացա՞ծ էր», «գժգո՞ւյն

էր, թե վառված», «աչքը հասեց ձեզ վրա» և այլն, և այլն: Համ-  
լետին մտասանել ևն այդ հարցերը: Հուզմունքից նա չի կարողացել  
կենտրոնանալ, դրա համար էլ հարցերը նա տվել է ենթագիտակցարար:

Առաջին այս արարվածի շորթորդ տեսարանում, երբ Հորացիոն  
հայտնում է ուրվականի գալուտը, Համլետը դիմելով ուրվականին  
ասում է.

Կանչում եմ քեզ, Համլետ.

Արքա հայր, տե՛ր Գանիտ. V օ՛հ, պատասխան տուր...

Այստեղ «տե՛ր Գանիտ»-յից հետո նա դրել է դադարի նշան (V), իսկ  
պարերևության դիմաց գրել. «մեծ պատուգ. դողացող ձայնով հանդարտ  
սկսել. դողում է ամբողջ մարմնով»: Անհավանական չէ, որ այդ մեծ  
պատուգից հետո բեմի խորքում պետք է երևար ուրվականը, իսկ Համ-  
լետը նրան անմեկուց հետո գոչեր. «պատասխան տուր, մի թող անգի-  
տությամբ տանջվեմ»: Այստեղ նա պետք է ապրեր և՛ սարսուտ, և՛ ահ, և՛  
դարմանք:

Ահա հոգեբանական մի այլ խնդիր Օֆելիայի հետ ունեցած տեսա-  
րանում: «Լինել թե չլինել» մենախոսության ավարտին մոտ, տեսնելով  
Օֆելիային, Համլետն ասում է.

Սիրուն Օֆելիա՛ն— նիմֆայզ գեղեցիկ

Քո ազոթքներից մեջ թող հիշվեն նաև

Իմ բոլոր մեղքերը:

Այս խոսքերի դիմաց Արելյանը գրել է. «ամենաքնքույշ և նուրբ ձայ-  
նով Օֆելիայի տեսարանը»: Այստեղ ակնհայտ է նրա Համլետի վերաբեր-  
մունքը գեպի Օֆելիան:

Հոգեկան խոտլորի ահա մի այլ տեսարան: Վարագույրի հետև թաքնը-  
ված Պոլոնիոսի սպանվելուց հետո թագուհին ճշում է. «վա՛յ ինձ, ի՛նչ  
արիր»: Համլետը պատասխանում է. «չգիտեմ, թագավո՞րն է՛ այս»: Այս  
խոսքերի դիմաց, որպես խնդիր, Արելյանը լուսանցքում գրել է՝ «զար-  
մացած»: Նրան դեռևս հայտնի չէ, թե թաքստոցից ով ասաց. «Օ՛հ, սպա-  
նեց ինձ»: Նա ուրախ կլիներ, եթե թագավորը լիներ, բայց քանի դեռ ան-  
հայտ է, տվյալ հոգեվիճակի արտահայտման խնդիրը դեռ դարմանքն է՝  
ո՞վ է արդյոք, սպանվածը: Եվ երբ լսում է թագուհու «Օ՛հ, ի՛նչ սոսկալի  
արլունահեղ մի գործ» խոսքը, Համլետի վերաբերմունքն իսկույն փոխ-  
վում է և նա վրդովված ասում է.

Արլունահե՞ղ մի գործ, նույնչափ վատ, մայր իմ,  
Որչափ որ վատ է սպանել մի արքա,  
Հետո ամուսնանալ նորա եղբոր հետ:

Այս երեք տողի դիմաց Արեւլանը գրել է «արագ»: Քիչ հետո, սա-  
կայն, երբ Համլետի համար պարզվում է իր զոհի ով լինելը, նրա ցա-  
սումը մեղմանում, այլ որակ է ստանում և նա կատարվածը հասկանա-  
լու համար դադար է տալիս:

Թե՛ պառուկաների և թե՛ խնդիրների այս կցկտուր գրառումները, եթե  
ամբողջական պատկերացում չեն տալիս Համլետի նրա դերակատարման  
մասին, համենայն դեպս վկայում են հոգեբանական այն բարդ վիճակ-  
ների ու նրանց նկատմամբ դերասանի ակտիվ վերաբերմունքի մասին,  
որը որպես կերպարի մեկնաբանման խնդիր գրել էր իր առաջ Արեւլանը:

Պիեռի և դերի վրա այդքան աշխատելուց հետո ի՞նչ ուժերով նա  
պետք է բեմ հաներ «Համլետը», ե՞րբ և որտե՞ղ: Այս հարցերին պատաս-  
խան տալու համար գոհացուցիչ փաստեր չկան: Միակ բանալին, որի հի-  
ման վրա խարսխված են մեր ենթադրությունները՝ դերաբաշխումներն  
են: Դերերի դիմաց, աջից, նա մատիտով նշել է դերակատարների ազգա-  
նունները՝ կրճատ: Սա պետք է համարել նրա առաջին դերաբաշխումը:  
Սա այն մատիտագիրն է, որով նա գրել է խնդիրները, կատարել նախ-  
նական կրճատումներ և թարգմանական միջամտություններ: Մատիտա-  
գիրը նախնական ենթ համարում, որովհետև պիեսի վրա կատարած հիմ-  
նական նշումները թանաքով են, երբեմն էլ մատիտի վրա թանաքով գր-  
րած: Այսպիսով, առաջին դերաբաշխման ժամանակ դերերը պետք է կա-  
ռարեին.

Կլոդիոս—Սարգս (Գ. Պարոն-Սարգսյան)

Համլետ—Աբել (Հ. Արեւլան)

Պոլոնիոս—Արաքս (Պ. Արաքսյան)

Հորացիո—Ալիս (Ի. Ալիսանյան)

Լաերտ—Ստեփ (Հ. Ստեփանյան)

Ռոզենկրանց—Ջար (Հ. Ջարիֆյան)

Գիլդենշտերն—Մել. Հով. (Վ. Մելիք-Հովսեփյան)

Օդրիկ—Բաղդաս

Համլետի հոր ուրվականը—Ստեփան (Հ. Ստեփանյան)

Դերասան—Ստեփան (Հ. Ստեփանյան)

1 գերեզմ.—Արաքս (Պ. Արաքսյան)

2 գերեզմ.—Մել. Հովս. (Վ. Մելիք-Հովսեփյան)

Գերակատարներ չեն ունեցել Վոլտիմանդը, Մարցելլոսը, Ֆորթին-բրասը, Գերտուզը և Օֆելիան: Գործող անձերից նա կրճատել է Կոոնելիոսին, մի այլ պալատականի, մի բաճանայի, Բեռնարդոյին, Ֆրանցիսկոյին, Ռեյնալդոյին, մի հարյուրապետի, մի դեսպանի: Արանց հետ կապված տեսարանները կրճատված են նաև պիեսում: Վերջում ընդհանուր առումով գրած «գերասաններ»-ից և «գերեղմանափորներ»-ից նա առանձնացրել և գրել է՝ գերասան, 1 գերեղմանափոր, 2 գերեղմանափոր:

Երկրորդ գերտաշխման ժամանակ (որ նշված է ձախից ուրիշ մատիտով), գերերը նախատեսված են եղել հետևյալ կազմի համար:

Կլոդիոս—Պետր (Գ. Պետրոսյան)

Համլետ—Արելյան

Պոլսնիոս—Վրույր

Հորացիո—Ալիսան (յան)

Լաերտ—Ադայան

Ռոդենկրանց—Չասիֆ (յան)

Գիլգենշտերն—Վալոդ (Վ. Մելիք-Հովսեփյան)

Օդրիկ—Եզո

Մարսելլոս—Ավետ (Գ. Ավետյան)

Համլետի հոր ուրվականը—Վարդ (Վարդանյան)

Գերասան—Ստեփ (Հ. Ստեփանյան)

1 գերեղմ.—Արաբ (Պ. Արաբյան)

2 գերեղմ.—Ավետ (Գ. Ավետյան)

Երկրորդ գերտաշխման ժամանակ նա ավելացրել է Մարցելլոսի դերակատարի ազգանունը, փոխել մի բանի գերակատարներ:

Գերասանների այս խումբը, որ նշված է «Համլետի» գերտաշխման մեջ, համընկնում է 1897—1898 թատերաշրջանի Բաբվի հայ դրամատիկ խմբի կազմին: Խմբում այդ ժամանակ ներգրավված են եղել հայ թատրոնի լավագույն ուժերից շատերը՝ Գ. Պետրոսյանը, Սիրանույշը, Պ. Արաբյանը, Հ. Արելյանը, Ա. Վրույրը, Գ. Թրյանը, Մարի-Հրանույշը, Գ. Ավետյանը, Հ. Ստեփանյանը, Ա. Հարությունյանը, Վարդուհին, Վ. Մելիքյանը և ուրիշներ: Խմբի մեջ են եղել նաև իրենց բեմական գործունեությունը նոր սկսած Իսահակ Ալիխանյանը և Վարդան Մելիք-Հովսեփյանը, որոնց մասնակցությունը մի ապացույց է, որ «Համլետ»-ի գերտաշխումը դրանից շուտ չի կատարվել:

Գերակատարների այս ցանկը միաժամանակ ցույց է տալիս, որ եր-

կու դերաբաշխումը կատարվել է իրարից շատ մոտ ժամանակամիջոցում: Եվ դա տեղի է ունեցել 1898 թվականի մարտ ամսին Քիֆլիսում: 1893 թվականի փետրվարի երկրորդ կեսից մինչև ապրիլի սկզբները Բաքվի հայ դրամատիկ խումբը ներկայացումներով հանդես է եկել Քիֆլիսում: Հենց այդտեղ էլ տեղի է ունեցել դերաբաշխումը: Արեւլանից բացի ուրիշ որևէ մեկը տեղյա՞կ է եղել նրա այդ մտադրությանը, թե ոչ, անհայտ է: Բայց, որ դերաբաշխումը կատարվել է 1898 թվականի գարնանը Քիֆլիսում, կասկածից վեր է: Դերացանկում հիշատակված Լաերտի դերակատար Մ. Աղայանը և Ռոզենկրանցի դերակատար Հ. Զարիֆյանը (որը նոր էր բեմ բարձրացել), Բաքվի հայ դրամատիկ խմբի դերասաններ չեն եղել: Նրանք խաղացել են Քիֆլիսում: Քիֆլիսում՝ Բաքվի խմբի տված ներկայացումների ժամանակ է, որ նրանք մասնակցել են միևնույն ներկայացումներին, որովհետև դրանից հետո, ապրիլին, Արեւլանն իր փորձիկ խմբով գնացել է Երևան:

Այսպիսով պարզվում է, որ «Համլետի» երկու դերաբաշխումն էլ Արեւլանը կատարել է 1898 թվականի գարնանը Քիֆլիսում: Որ այդ դերաբաշխումը և պիեսի բեմադրության կենսագործման գաղափարը ծնունդ են առել Քիֆլիսում, վկայում է նաև մի ուրիշ, ոչ պակաս կարևոր փաստ, որը միաժամանակ լույս է սփռում այն հարցի վրա, թե ինչու Արեւլանը չխաղաց Համլետ:

1929 թվականին, ազգային թատերական արվեստի նվաճումների մասին ունեցած մի հարցազրույցի ժամանակ, Արեւլանը պատմել է նախահեղափոխական շրջանում կրած դժվարությունների մասին: «Յարական կառավարութունը, — պատմել է նա, — ամբողջ ուժով աշխատում էր խեղդել ազգային կուլտուրան, և ազգային թատրոններին մնում էր կռվել յուրաքանչյուր ոստիկանապետի հետ... Ազգային թատրոնների դեմ իրենց ատելության մեջ ցարական սատրապները հասնում էին մինչև արսուրդի, և ոչ միայն խուլ անկյուններում, այլ Անդրկովկասի կենտրոնում՝ Քիֆլիսում: Օրինակ, «Համլետը» հայերեն թարգմանել է Խան Մասեհյանը, իսկ ոստիկանապետը պահանջում էր, որ խաղացվի Վեյնբերգի թարգմանութամբ<sup>7</sup>: Բանն այն է, որ Վեյնբերգի թարգմանութունը «Համլետի» միակ ուսերեն թուլատրված թարգմանութունն էր: Բայց ոստիկանապետը ոչ մի կերպ չէր ըմբռնում, որ հայկական թատրոնի համար անհրաժեշտ է թարգմանել հայերեն լեզվով»<sup>8</sup>:

Արդյոք Քիֆլիսի ոստիկանապետի այս արգելքը չի՞ եղել Արեւլանի Համլետ չխաղալու պատճառն այդ շրջանում: Թվում է թե այո: Արեւլանի

այդ փորձից մի բանի ամիս անց, Շուշիում, Գևորգ Պետրոսյանը «Համ-  
լեախից» խաղաղացի է մի հատված: Հետագայում Արեւիլյանն այլևս չի մո-  
տեցել այդ դերին, թերևս հեռանալով նրանից և՛ հոգեպես, և՛ ֆիզիկա-  
պես: Բայց որ Արեւիլյանը պղպեղ է այդ դերի մեծությունը և երկյուղածու-  
թյան զգացումն է նրան ետ պահել նոր փորձ կատարելուց՝ դա իրողու-  
թյուն է:

#### Մ Ա Ն Ո Ք Ա Գ Բ Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Արեւիլյանի շերտերյան այս դերակատարումների (Կասիս, Հորացիո) մասին նախ-  
կինում մեր հրատարակած տվյալները (ՏԷՍ, «Սովետական արվեստ», 1964, № 3, էջ 24 և  
«Հովհաննես Արեւիլյան» արտոմ-ժողովածու, 1965, էջ 183) ճիշտ չեն: Արեւիլյանի վերահիշյալ  
դերակատարումների տարեգրությունը այսուհետև պետք է ընդունել այս հոդվածում տրք-  
ված ձևով:

2 Գրականության և արվեստի թանգարան (ԳԱՔ), Ն. Արեւիլյանի արխիվ, № 50:

3 Նույն տեղ:

4 ԳԱՔ, Հ. Արեւիլյանի արխիվ, VI Բ. № 148:

5 ԳԱՔ, Հ. Արեւիլյանի արխիվ, VI Բ. № 53:

6 Նույն տեղ:

7 Արեւիլյանը պարզապես շփոթել է Թարգմանչի ազգանունը: Վեյները Թարգմանչի է  
ոչ թե «Համլեար», այլ «Օթկլուն»:

8 Рабочий зритель (Баку), 1929, № 6.